ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 03.07.2026թ.
Ժամը 12[25]

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ԳՇ ՀՋ և Հ վարչության օպերատիվ բաժնի պլանավորման և զարգացման բաժանմունքի պետ, փոխգնդապետ՝ Ա. Պետրոսյան (ԳԱՊ),

ՀՀ ՋՈՒ ԳՇ ՀՋ և Հ վարչության օպերատիվ բաժնի պլանավորման և զարգացման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ՝ Վ. Դաշյան:

Բացակայում է՝

ՀՀ ՋՈՒ ԳՇ ՀՋ և Հ վարչության օպերատիվ բաժնի պլանավորման և զարգացման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ՝ Ա. Շահինյանը:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս.Եսոյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակցի անվանումը
1	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ
2	«ՆՕՐԴ» ՍՊԸ
3	«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի հավելված 1-ի՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության, և հավելված 1.1-ի՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի:

2.3 «ՆՕՐԴ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), իսկ «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի և «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերը՝ ոչ, մասնավորապես՝

«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1-ը:

Համաձայն «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի՝ ընկերության տնօրեն է հանդիսանում Գևորգ Խալաթյանը, սակայն հայտում ներառված բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են Ջանիբեկ Թովմասյանի կողմից, իսկ վերջինիս նման իրավասությամբ լիազորելու վերաբերյալ տեղեկատվություն՝ լիազորագիր, չկա ներկայացված հայտում: Ուստի անհրաժեշտ է ներկայացնել փաստաթուղթ (լիազորագիր) այն մասին, որ Ջանիբեկ Թովմասյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ լիազորված է եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու հայտում ներառված բոլոր փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 03.07.2026թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

(Ս. Եսոյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա Մասնակիցների կողմից շտկումների ներկայացումից հետո ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Պետրոսյան

Գնահատող, Վ. Դաշյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 09.07.2026թ.
Ժամը 11[00]

Ի գիտություն՝ քանի որ հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ՋՈՒ ԳՇ ՀՋ և Հ վարչության օպերատիվ բաժնի պլանավորման և զարգացման բաժանմունքի պետ, փոխգնդապետ՝ Ա. Պետրոսյանը (ԳԱՊ) բացակայում է նիստից, ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ՀՀ ՋՈՒ ԳՇ ՀՋ և Հ վարչության օպերատիվ բաժնի պլանավորման և զարգացման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ՝ Ա. Շահինյանը:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ԳՇ ՀՋ և Հ վարչության օպերատիվ բաժնի պլանավորման և զարգացման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ՝ Ա. Շահինյան,

ՀՀ ՋՈՒ ԳՇ ՀՋ և Հ վարչության օպերատիվ բաժնի պլանավորման և զարգացման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ՝ Վ. Դաշյան:

Բացակայում է՝

ՀՀ ՋՈՒ ԳՇ ՀՋ և Հ վարչության օպերատիվ բաժնի պլանավորման և զարգացման բաժանմունքի պետ, փոխգնդապետ՝ Ա. Պետրոսյանը (ԳԱՊ):

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. 03.07.2026թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցներից պահանջված շտկումները քննարկելու վերաբերյալ.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
4. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. 03.07.2026թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցներից պահանջված շտկումները քննարկելու վերաբերյալ.

(Ս.Եսոյան)

09.07.2026թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ն և «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

2.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակիցներ.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Գնման գինը /ՀՀ դրամ/	Մրցույթին մասնակցող կազմակերպության անվանումը	գնային առաջարկը /ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	եռոտանի (շտատիվ) (ՊԱԲ-2Մ շրջադիտակային հրետանային բուսոլի և Կ-1 կոլիմատորի եռոտանի)	հատ	100	14 800 000	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ	11 990 000	2 398 000	14 388 000
					«ՆՕՐԴ» ՍՊԸ	10 730 000	2 146 000	12 876 000
					«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ	15 705 000	3 141 000	18 846 000
2	հատուկ հանդերձանք և պարագաներ (ՑՊ135 «Ֆագոտ» ՀՏՀՀ-ի արձակման կայանքի բեռնապարկ)	հատ	100	4 752 000	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ	6 537 500	1 307 500	7 845 000
					«ՆՕՐԴ» ՍՊԸ	3 326 400	665 280	3 991 680

2.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

2.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

3.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 09.07.2026թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «ՆՕՐԴ» ՍՊԸ-ն:

3.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Եսոյան)

4.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող — Ա. Շահինյան

Գնահատող — Վ. Դաշյան

Գնումները համակարգող՝ — Ս. Եսոյան